ի կողմանէ, իւրեանց Կոնսիստորիայից զայնպիսիս, այսինքն հինգերորդ աստիճանի խնամական չհասութիւնս, չառաքելով այլ ևս ի Սինոդդ և չտալով տեղի աւելորդ դրագրութեանց։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԿՐՏԻՉ Եպիսկոպոս Ամենայն Հայոց.

յ30 Յունիսի 1899 ամի
և ըստ Տոմարիս ՌՑԻԹ.
ի Հայրապետութեան Մերում Զ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 797.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝

Սինոդի Ս. Էջմիածնի.

Ի բաղում դէպս հասանին Մեզ խնդիրք զանազան անձանց ցանկացողաց մտանել ի նոր ամուսնութիւն յեօթնեերորդ աստիճանի ազգականութեան, մերժեալք ի Հոգևոր Ատենից և ի Սինոդէդ։ Են՝ զի նկարագրելով զհանգամանս դժպատեհս, յորոց յառաջացեալ է միաւորութիւն ամուսնացողաց, սաստան ի Մէնջ զհրաման պսակի անխտիր։ Են այնպիսիք, զի զրկեալ յամենայն Ատենից և թոյլատրութեանց՝ կենակցին ապօրինի՝ ապօրինի համարելով նաև զանմեղ զաւակունս նոյն իսկ ծնեալս ի սուրբ աւազանէն և ի միաւորութենէ խորհրդով պսակին թէ յայտնի և թէ գաղտնի, և այս որպէս թէ ի խրատ այլոց, բայց Ես ասեմ՝ ի խրախոյս այլոց, որք գիտելով զշահասիրութիւն տգէտ և աղքատ հոգևորականաց, պսակին գաղտնի, ընդօրինակելով զայս վատ սովորութիւն ի միմեանց, և առ այս իսկ տեսանեմք այսօր ի բաղում տեղիս բազմաթիւ ապօրինի կենա-

կցութիւնք, անվաւեր ամուսնութիւնք, թէպէտ և կնքեալք Խաչիւ և Աւետարանաւ, թող զայլ հետևանս և զարդիւնս յուսահատութեան, որ մղէ զսիրահարս։

Միանգամ ընդ միշտ առ ի վերջ տալ այսօրինակ անախորժութեանց և դժբախտութեանց, ևս առաւել ի նկատ առեալ Մեր զհանդամանս ժամանակի զէթ յաղագս ազգիս, մանաւանդ զներոդ ոգին Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, որ յամենայն նեղութեան ժամանակի զիջեալ է ինչ ինչ ներողութեամբ, Մեք որպէս Հայրապետ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, Հայր և պահապան հարազատից նոյն Եկեղեցւոյ՝ զաւակաց ս. Հօրն մերոյ Լուսաւորչի, սովին կոնդակաւ առաջադրեմք Սինոդիդ պատուիրելով յետ այսու անպայման թոյլատրել յօրագիրս դորին զեօթներորդ աստիճանի ազգակցական չհասութիւնս, քանզի այսպէս է պահանջ ժամանակի։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց.

յ17 Դեկտ. 1899 ամի
և ըստ Տոմարիս ՌՃԾ.
ի Հայրապետութեան Մերում Է. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 1490.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝

ՍԻՆՕԴԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Յայտնի է Մեզ եթէ պսակք՝ կատարեալք ի վեցերորդ աստիճանի ազգակցութեան և ի չորրորդ աստիճանի խնամութեան, անվաւերք համարին ի Սինոդէդ և պսակեալքն որպէս և պսակադիրքն յանձնին ի դատ մարմնաւոր իշխանութեան։